

ԷԴՈՒԱՐԴ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ՕՐԴՅԱՆ

Ծնվել է 1938թ. նոյեմբերի 30-ին Տավուշի մարզի Այգեձոր գյուղում:

- 1945-1956** - Այգեձորի միջնակարգ դպրոց
- 1956-1961** - ԵՊՀ, տնտեսագիտության ֆակուլտետ
- 1961-1963** - ինժեներ-տնտեսագետ թեթև արդյունաբերության ձեռնարկություններում
- 1963-1970** - ՀԽՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտ, ասպիրանտ, ավագ գիտաշխատող
- 1970-1989** - ԽՍՀՄ պետպլանին առընթեր պլանավորման և նորմատիվների ԳՀԻ հայկական մասնաճյուղ, սեկտորի և բաժնի վարիչ
- 1989-1995** - ՀԽՍՀ պետպլանի տնտեսագիտության և պլանավորման ԳՀԻ, գիտության գծով փոխտնօրեն
- 1995-2006** - ՀՀ կառավարման դպրոց, փոխտնօրեն գիտաուսումնական աշխատանքների գծով, ՀՀ կառավարման ակադեմիա, պրոռեկտոր
- 2006-ցայսօր** - Տնտեսագիտության և կառավարման ինստիտուտ, գիտակրթական բլոկի ղեկավար, տնօրեն

Իր հետազոտությունների արդյունքում նա 1980-ին պաշտպանել է դոկտորական ատենախոսություն և ստացել տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան, իսկ 1984-ին նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Ընդհանուր առմամբ նա հեղինակել է ավելի քան 250 գիտական աշխատանք, որոնցից 36 անուն աշխատությունները լույս են տեսել ԱՄՆ-ում, Չեխիայում, Սլովակիայում, Մերձբալթյան և ԱՊՀ երկրներում: Նա զեկուցումներով հանդես է եկել միջազգային, համամիութենական և հանրապետական 35 գիտաժողովներում, որոնք տեղի են ունեցել Լոս Անջելեսում, Մոսկվայում, Տալինում, Ռիգայում, Կիևում, Լվովում, Օդեսայում, Դնեպրոպետրովսկում, Խարկովում, Դոնի Ռոստովում, Կրասնոդարում, Տաշքենդում, Թբիլիսիում, Բաքվում, Երևանում և այլ քաղաքներում: Նրա գիտական ղեկավարությամբ պաշտպանել և ներկայում ատենախոսություններ են պատրաստում 50 դոկտորանտներ, ասպիրանտներ և հայցորդներ:

Նա եռանդուն մասնակցություն է ունեցել ՀԽՍՀ-ի և ներկայումս էլ ՀՀ-ի գիտական և հասարակական կյանքին: Եղել է գիտական և գիտամեթոդական բազմաթիվ խորհուրդների, օրենսդիր և գործադիր մարմիններում գործող հանձնաժողովների անդամ: Նա եղել է գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդների անդամ ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտում, Երևանի ժողտնտեսության (ՀՊՏՀ) ինստիտուտում, Հայաստանի պետպլանի տնտեսագիտության և պլանավորման (տնտեսագիտական հետազոտությունների) ինստիտուտում և այժմ էլ Երևանի պետական

համալսարանում:

Պրոֆ. Է.Օրդյանը «Տնտեսության զարգացման և կառավարման հիմնախնդիրներ» պարբերական գիտական ժողովածուի գլխավոր խմբագիրն է, «Հանրային կառավարում» և «Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդեսների խմբագրական վարչանու անդամ: Նա հանդիսացել է ՀՀ նախագահին առընթեր Տեղական ինքնակառավարման հարցերի հանձնաժողովի և ՀՀ կառավարության պետական կառավարման բարեփոխումների ենթահանձնաժողովի անդամ:

Է.Օրդյանը 1989թ. առ օրս «Տավուշ» հայրենակցական միության նախագահության անդամ է, իսկ 1992-2002թթ. եղել է այդ միության նախագահը և մեծ ավանդ է ներդրել Տավուշի տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման աջակցության գործում:

Նա Այգեձորի համայնքի պատվավոր քաղաքացի է:

Է.Օրդյանն արժանացել է «Սովետական Հայաստան» թերթի «Ոսկե գրիչ» մրցանակին (1976թ.) ԽՍՀՄ ԺՏՆՑ-ի երկու արծաթե մեդալի (1981 և 1983թթ.), ՀԽՍՀ ԳՏԸ առաջին մրցանակին (1984թ.), ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ոսկե մեդալի (2013թ.), ՀՀ տարածքային կառավարման նախարարության հուշամեդալի (2013թ.), Երևանի քաղաքապետի ոսկե մեդալի (2013թ.), բազմաթիվ պատվոգրերի ու շնորհակալագրերի:

Այժմ էլ պրոֆ. Է.Օրդյանը եռանդով շարունակում է գիտամանկավարժական գործունեությունը՝ իր նպաստը բերելով հայրենի տնտեսագիտական մտքի զարգացման և հանրային ծառայողների պատրաստման ու վերապատրաստման գործին:

Հիմնական հրատարակություններն են՝

- Արդյունաբերական արտադրանքի որակը և նրա բարելավման ուղիները, Եր., 1965:
- Արտադրանքի որակը և նրա բարելավման հիմնական գործոնները, Եր., 1968:
- Արտադրանքի որակի կառավարման պրոբլեմները, Եր., 1977:
- Управление качеством продукции: Вопросы организации (Региональный аспект), М., 1984.
- Республиканская система управления качеством продукции в Армянской ССР (в 2-х томах), Ер., 1985.
- Կառավարման կազմակերպական կառուցվածքի կատարելագործումը, Եր., 1989:
- Հայաստանի անկախ հանրապետության կառավարման կառուցվածքի կազմավորման հիմնական սկզբունքները, “Հայաստանի տնտեսական վերակառուցումը” համագումարի նյութեր, ԼոսԱնջելես, 1991:
- Պետական կառավարման համակարգը Հայաստանում, Եր., 1998:
- Պետական կառավարման համակարգի ձևավորումը Հայաստանում, “Մարդկային զարգացման զեկուլյց”, Հայաստան, 1998:
- The problems of public administration in Armenia. NISPAcee Occasional papers N3, 2000.
- Տեղական ինքնակառավարման հիմունքներ: Ուսումնական ձեռնարկ (ընդհ. խմբ. և համահեղինակ), Եր., 2000:
- Տեղական ինքնակառավարման հիմունքներ: Ուսումնամեթոդական նյութեր (ընդհ. խմբ. և համահեղինակ), Եր., 2000:
- Տեղական ինքնակառավարման հիմունքներ: Թեստեր և խնդիրներ (ընդհ. խմբ.), Եր.,

2000:

- Աղքատության նվազեցման հիմնախնդիրները ՀՀ համայնքներում (համահեղինակ), Եր., 2001:
- Տեղական ինքնակառավարման հիմունքներ: Նոր զարգացումներ (ընդհ. խմբ. և համահեղինակ), Եր., 2002:
- Տեղական ինքնակառավարման հիմունքներ: Կառավարչական հմտություններ (ընդհ. խմբ. և համահեղինակ), Եր., 2002:
- Ապակենտրոնացում. հայեցակարգային հիմնադրույթներ, Եր., 2007:
- Համայնքային ծառայության հիմունքներ: Ուսումնական ձեռնարկ (ընդհ. խմբ. և համահեղինակ), Եր., 2009:
- Ինքնության ճանապարհ, Եր., 2009:
- Անուրջ: Բանաստեղծություններ, Եր., 2015:

Է.Օրդյանի գիտական խմբագրությամբ և հեղինակային մասնակցությամբ լույս է տեսել գիտաժողովի նյութերի և գիտական աշխատանքների 16 ժողովածու, որոնք վերաբերում են պետական կառավարման, տեղական ինքնակառավարման, տնտեսության զարգացման և կառավարման հիմնախնդիրներին:

ՎԵՐՋԻՆ 5 ՏԱՐԻՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ

1. ՀՀ վարչատարածքային միավորների արտաքին տնտեսական կապերի զարգացման ներուժի գնահատման մեթոդական մոտեցումներ (համահեղինակությամբ): “Տնտեսության զարգացման և կառավարման հիմնախնդիրներ” (Գիտական աշխատանքների ժողովածու). – Գիրք 7. – Եր.: “Օր-Ռար” հրատ., 2014, 8-40 էջեր:

2. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների վերապատրաստման կարիքները և ծրագրերը (համահեղինակությամբ): “Տնտեսության զարգացման և կառավարման հիմնախնդիրներ” (Պարբերական գիտական ժողովածու). – Գիրք 8. – Եր.: “Օր-Ռար” հրատ., 2015, 135-159 էջեր:

3. Հանրային ծառայությունները և դրանց կառավարման բարելավման ուղղությունները: “Տնտեսության զարգացման և կառավարման հիմնախնդիրներ” (Պարբերական գիտական ժողովածու). – Գիրք 9. – Եր.: “Օր-Ռար” հրատ., 2016, 108-125 էջեր:

4. Էլեկտրոնային կառավարության ներդրման հիմնախնդիրները (համահեղինակությամբ): “Տնտեսության զարգացման և կառավարման հիմնախնդիրներ” (Պարբերական գիտական ժողովածու). – Գիրք 10. – Եր.: “Օր-Ռար” հրատ., 2017, 208-218 էջեր: